Աշխատանքի ծածկագիր 1620

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 25.11.2021թ.

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Գ.Հարությունյանի
մասնակցությամբ անդամներ՝
Տ.Մարկոսյանի
Լ.Գրիգորյանի

Քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քաղաքացիական իրավունք բաժնի 8-րդ, 31-րդ, և քաղաքացիական դատավարություն բաժնի 16-րդ, 19-րդ հարցերը:

Քաղաքացիական իրավունք բաժին

Հարց 8

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ թեստային առաջադրանքի և դրա պատասխանների ամբողջությունը թույլ է տալիս հստակ պատկերացնել, թե ում օգտին ալիմենտ բռնագանձելու մասին է խոսքը:

Հարց 31

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Իր ամբողջ գույքը կամ դրա մի մասը նվիրելու՝ առանց գույքի, իրավունքի կամ պարտականությունից ազատելու տեսքով նվիրատվության կոնկրետ առարկան նշելու խոստումը, առոչինչ է: Հետևաբար, հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն:

Քաղաքացիական դատավարության բաժին

Հարց 16

Ընտրված պատասխանը ճիշտ չէ, քանի որ դրանում բացակայում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 350-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում նախատեսված «եթե այդպիսի լիազորություն նախատեսված է օրենքով կամ միջազգային պայմանագրերով» ձևակերպումը:

Հարց 19

Հայցը առանց քննության չթողնելու համար անհրաժեշտ էր ոչ թե դատական նիստը, այլ գործը իր բացակայությամբ քննելու մասին միջնորդություն, որպիսի պայմաններում հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 105.1-րդ հոդվածով, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի՝ 2021 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԲԴԽ-73-Ո-175 որոշմամբ հաստատված թիվ 4 հավելվածի 29-րդ կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 1620 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը ամբողջությամբ մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **Տ.ՄԱՐԿՈՍՅԱՆ**

Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ